ՎԱՅՐԻ ԲՈՒՅՍԵՐԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՍՆՆԴԻ ՄԵՋ

ՎԱՅՐԻ ԲՈՒՅՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՍՆՈՒՆԴ ԵՎ ԴԵՂԱՄԻՋՈՑ

Հայաստանը հայկական բարձրավանդակի հյուսիսային վերջավորությունն է և ամբողջությամբ գտնվում է ծովի մակերևույթից 450-4095մ բարձրության վրա: Բարդ երկրաբանական կառուցվածքը նպաստել է կլիմայի և ռելիեֆի խիստ բազմազանությանը: Դրանով էլ հենց պայմանավորված է համեմատաբար փոքր տարածություն ունեցող Հայաստանի ֆլորիստական հարստությունը, նրա ինքնատիպությունը և բուսատեսակներով հագեցվածությունը:

Ընդհանուր առմամբ Հայաստանի տարածքում աճող 3500 բուսանմուշներից մոտ 2500-ն ունի բուժական նշանակություն, որից մեր հանրապետությունում կիրառվում է մոտ 250-ը, ոչ միայն որպես դեղամիջոց, այլ նաև որպես սնունդ: Բացի այդ, Հայաստանում աճող բուսատեսակներից ավելի քան 110-ը էնդեմիկներ

են (աճում են միայն Հայաստանում):

Վայրի օգտակար բույսեր ներկա էտապում հանդիսանում են հայ ժողովրդի ավանդական սննդաբաժնի 10-15%-ը: Թերևս մեր՝ լեռնաբնակներիս երկարակեցության գաղտնիքը պայմանավորված է հենց դրանով: Յուրաքանչյուր տարի միայն Երևանի շուկաներում վաճառվում է շուրջ 180տ վայրի դեղաբույսեր և բանջարեղեն,

որոնք ուղղակի արմատահան են արվում և ոչնչացվում: Մեր հանրապետությունում նշված բուսատեսակներից 387-ը նշված են «Կարմիր գրքում», որոնք հիմնականում սննդի մեջ օգտագործվող բույսեր կամ դեղաբույսեր են: Այս բուսատեսակների մասին անհրաժեշտ է տեղեկությունները, դրանց հավաքման, չորացման ու պահպանման ճիշտ տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ գիտելիքները հնարավորություն կտա խուսափելու թունավորման բազմաթիվ դեպքերից, կնպաստի ոչնչացման վտանգի տակ գտնվող բուսատուների պահպանմանը, ինչպես նաև կնպաստեն բազմազան և առողջարար սննդի ապահովմանը:

Հաճախակի են թունավորման դեպքերը: Միայն վերջին 2 տարում գրանցվել է թունավորման 243 դեպք, որից 29-ը մահացել են, ընդ որում 10-ը սնկից, իսկ մի քանիսին էլ վայրի բույսերի վերամշակումից (ոչ ճիշտ պահածոյացումից): Թունավորման դեպքեր են գրանցվում նաև վայրի բույսերի չճանաչողության հետևանքով:

Չնայած դեղամիջոցների անսահման առատությանը, աշխարհի առաջավոր երկրներում գնալով մեծ տեղ են հատկացնում բնական միջոցներին մի ամբողջ շարք հիվանդությունների բուժման համար: Պատճառն ակնհայտ է. որքան էլ կատարյալ լինի քիմիական (սինթետիկ) դեղամիջոցը այն շատ անգամ կողմնակի, ոչ ցանկալի երևույթներ է առաջացնում, այն դեպքում երբ բնական միջոցները ազդող նյութի հետ մեկտեղ պարունակում են այնպիսի միացություններ, որոնք ուժեղացնում են առաջինի ազդեցությունը, միևնույն ժամանակ մեղմացնում են հնարավոր անցանկալի, կողմնակի երևույթները: Բնակչության մի մասը ոչ անհիմն, վախենում է քիմիական դեղամիջոցների օգտագործումից: Կա և ուրիշ հանգամանք,

դեղամիջոցները բավականին թանկ են և բնակչության մեծամասնությունը պարզապես ի վիճակի չէ գնելու այն, մինչդեռ դեղաբույսերը բավականին էժան են և արդյունավետ, հաճախ կարող են ձեռք բերել անվճար:

Սակայն կա մի ցավոտ խնդիր: Բնակչության մեծամասնությունը անտեղյակ է և լավ չի ճանաչում բույսերը և հաճախ առանց մասնագետի հետ խորհրդակցելու, փողոցից պատահական գնում է այն դեղաբույսերը, որն իրեն առաջարկում են, հաճախ նույնիսկ այնպիսի տեսակներ, որոնք մեր հանրապետությունում տարածված չեն: Այսպես, օրինակ Հայաստանում ընդհանրապես դեղատնային երիցուկ չի աճում, կան միայն արտաքինով մի քիչ նման, սակայն այլ տեսակներ, որոնց բուժման հատկությունները կամ շատ թույլ, աննշան են արտահայտված (երիցուկ անհոտ) կամ նույնիսկ թունավոր են (անթեմ գարշահոտ): Նույնը կարելի է ասել նաև փողոցներում վաճառվող այլ դեղաբույսերի մասին: Բացի այդ հաճախ ենք նկատում, որ քաղաքի պուրակներից, այգիներից կամ ճանապարհների եզրերից մարդիկ դեղաբույսեր կամ ուտելի բույսեր են հավաքում, չիմանալով որ այդ բույսերի մեջ շրջակա միջավայրի ախտոտվածության հետևանքով կուտակվում են ծանր մետաղներ, որոնք խիստ վնասակար են մարդու առողջության համար:

Ներկայումս լուրջ մտահոգություն է առաջացնում նաև օգտակար բույսերի ոչնչացումը: Բնակչության մի մասը օգտվելով մեր հանրապետության «Կանաչ դեղատնից» անխղճորեն արմատախիլ է անում անհայտացման եզրին գտնվող բազմաթիվ բույսեր: Այս խնդիրը լուծելու համար, վայրի բուսատների

պահպանման ու ընդլայնման նպատակով տարեցտարի պետք է ավելացնել մշակվող դեղաբույսերի տարածքը, այդ դեպքում մենք ոչ միայն կփրկենք բնությունը, այլև մշակության ճիշտ և առաջավոր տեխնոլոգիաներ կիրառելով մի քանի անգամ բույսի մեջ կավելացնենք ֆիզիոլոգիական ակտիվ նյութերի քանակը, որի հետևանքով էլ կմեծանան դեղաբույսերի բուժական հատկությունները: Հարկ է նշել նաև, որ տնային պայմաններում պետք է խուսափել թունավոր դեղաբույսեր օգտագործելուց, իսկ եթե

այնուամենայնիվ կա դրա անհրաժեշտությունը, անպայման խորհրդակցել բժշկի հետ:

Վայրի օգտակար բույսերի բուժիչ հատկությունները պայմանավորված են նրանց օրգաններում եղած քիմիական տարբեր բաղադրության օրգանական նյութերով (ալկալոիդներ, գլիկոզիդներ, եթերայուղեր, վիտամիններ և այլն), որոնք ֆիզիոլոգիական ներգործություն են ունենում մարդկանց կամ կենդանիների օրգանիզմների վրա: Աճման տարբեր փուլերում բուժիչ նյութերի քանակը և բաղադրությունը կարող է խիստ տարբեր լինել: Հավաքած բույսերը սովորաբար չորացնում են հատուկ չորանոցներում կամ ստվերում (բացառությամբ մի քանիսի, որոնց թարմ հումքից ստանում են եթերային յուղեր և հյութեր): Դեղաբույսերի անվանակարգի մոտ 75%-ը (հումքի մոտ 50%-ը) վայրի է, մնացածը՝ մշակովի:

Դեղաբույսեր

ՀՀ-ում բուժիչ հատկություններով օժտված է մոտ 1500 բուսատեսակ (օգտագործվող դեղապատրաստուկների մոտ 40%-ն ունի բուսական ծագում):

Հավաքած դեղաբույսերը սովորաբար չորացնում են հատուկ չորանոցներում կամ ստվերում՝ բացառությամբ մի քանիսի, որոնց թարմ հումքից ստանում են եթերայուղեր և հյութեր: Չորացրած դեղաբույսերն օգտագործում են թուրմեր, եփուկներ պատրաստելու համար, քիմիադեղագործական արդյունաբերության մեջ՝ հիմնականում մաքուր ներգործող նյութեր ստանալու համար:

Դեղաբույսերից ստացված և քիմիաբուժական պատրաստուկներին ներկայացվող պահանջները՝ արդյունավետությունն ու անվտանգությունը, նույնն են: Չի կարելի միմյանց հակադրել դեղաբույսերը և սինթետիկ դեղամիջոցները կամ բնական հումքից ստացված միացությունները: Հմուտ օգտագործման դեպքում բոլոր դեղամիջոցները լրացնում են միմյանց:

ՀՀ-ում առավել տարածված դեղաբույսերից են.

Առյուծագի. բազմամյա խոտաբույս է: Աճում է ամենուրեք, նաև մշակվում է: Բուժման նպատակով օգտագործում են տերևները և ընձյուղների գագաթները: Պատրաստուկներն ունեն կենտրոնական նյարդային համակարգը հանգստացնող, սրտի աշխատանքը կարգավորող, զարկերակային ճնշումն իջեցնող և քնաբեր հատկություններ:

Արյունխմիկ դեղատու. բազմամյա խոտաբույս է: Աճում է խոնավ մարգագետիններում, գետափերին, անտառների բացատներում: Բուժիչ նշանակություն ունեն արմատներն ու կոճղարմատները, որոնցից ստացվող պատրաստուկները տտիպ են և օժտված են հակաբորբոքային և արյունահոսությունը դադարեցնող հատկություններով:

Բոնչի սովորական. վայրի թուփ է, աճում է ջրամբարների ափերին, թփերի մացառուտներում, անտառներում: Բուժիչ հատկություն ունեն կեղևը և պտուղները: Կեղևից ստացվող պատրաստուկներն ունեն արյունահոսությունը դադարեցնող ազդեցություն: Պտուղները պարունակում են C վիտամին ու կիրառվում են ստամոքսի խոցի դեպքում և որպես միզամուղ միջոց:

Դժնիկ լուծողական (բեկտենի). թուփ է կամ փոքր ծառ, աճում է բաց տարածություններում, լեռնային կիրճերում: Պտուղների թուրմն ու եփուկն օգտագործվում են քրոնիկական փորկապությունների ժամանակ:

Եղերդակ (ճարճատուկ). երկամյա կամ միամյա խոտաբույս է: Բոլոր օրգանները պարունակում են կաթնահյութ: Անջրդի հովիտներում, անտառեզրերին, ճամփեզրերին և առուների եզրերին աճում է եղերդակի 2 տեսակ: Արմատների թուրմն ունի ախորժաբեր և մարսողությունը կարգավորող, իսկ տերևների թուրմը՝ հակամանրէային ազդեցություն:

Երիցուկ դեղատնային. միամյա կամ բազմամյա խոտաբույս է: Աճում է դաշտերում, մարգագետիններում, նաև մշակվում է: Ծաղկազամբյուղների թուրմն ու եփուկը, որպես հակաբորբոքային, քրտնաբեր, վարակազերծող միջոց, օգտագործվում են լուծի դեպքում, կոկորդի և լնդերի բորբոքումների, բերանաբորբի ժամանակ:

Լոշտակ սպիտակ (մարդախոտ). բազմամյա խոտաբույս է: Աճում է բոլոր գոտիների գետահովիտներում, անտառի բացատներում, աղբուտներում: Բուժիչ նպատակով հիմնականում օգտագործվում են արմատները, որոնց եփուկն ունի ցավամոքիչ, արյունահոսությունը դադարեցնող, միզամուղ, լուծողական հատկություններ:

Կատվախոտ դեղատու. բազմամյա խոտաբույս է: Աճում է Իջևանի, Սևանի, Վայքի, Մեղրու, Վանաձորի անտառային բացատներում, ալպյան մարգագետիններում: Արմատի թուրմն ու մզվածքն ունեն սիրտանոթային համակարգի աշխատանքը կարգավորող, նյարդերը հանգստացնող, մարսողությունը լավացնող ներգործություն:

Հազարատերևուկ սովորական. բազմամյա խոտաբույս է: Աճում է Գեղարքունիքի, Տավուշի, Կոտայքի մարզերի մարգագետիններում ու թփուտներում: Պատրաստուկները բարձրացնում են արյան մակարդելիությունը, լավացնում ախորժակը, կարգավորում

մարսողությունը, ունեն հակաբորբոքային և հակամանրէային հատկություններ:

Սրոհունդ սովորական (արևքուրիկ). բազմամյա խոտաբույս է: Աճում է ամենուրեք՝ մարգագետիններում, գետահովիտներում, անտառային բացատներում: Եփուկը և սպիրտային թուրմն ունեն կապող, հակամանրէային, հակաբորբոքային, հակաճիճվային, ինչպես նաև հյուսվածքների վերականգնումը խթանող հատկություններ: Տերևներից և ցողունից ստանում են իմանին և նովոիմանին պատրաստուկները, որոնք կիրառվում են վերքերի, այրվածքների, կրծքագեղձի բորբոքումների բուժման համար:

Տերեփուկ կապույտ. միամյա խոտաբույս է: Աճում է ամենուրեք՝ անմշակ հողերում, թփուտներում: Բուժիչ նշանակություն ունեն ծաղիկները, որոնց թուրմն օգտագործվում է որպես միզամուղ, լեղամուղ, քրտնամուղ, հակաբորբոքային միջոց, ինչպես նաև թրջոցների ձևով՝ աչքի լորձաթաղանթի բորբոքման, արցունքահոսության ժամանակ:

Տուղտ դեղատու. բազմամյա խոտաբույս է: Աճում է գետափերին, ձորեզրերին, այգիներում, խոնավ մարգագետիններում: Տարածված է նաև հայկական տուղտը, որը հանդիպում է Արմավիրի, Տավուշի, Արարատի, Սյունիքի մարզերում: Չորացրած արմատներից ստացվող փոշին և թուրմն ունեն խորխաբեր ու հակաբորբոքային հատկություններ, օգտագործվում են շնչուղիների, միզուղիների, ստամոքսաղիքային համակարգի հիվանդությունների ժամանակ:

Օճառախոտ դեղատու. բազմամյա խոտաբույս է: Աճում է Արարատի, Տավուշի, Գուգարքի, Սյունիքի մարզերի ցանքերում, խոտհարքներում, անտառի բացատներում, ճամփեզրերին: Բուժիչ հատկություն ունեն արմատները, որոնք օժտված են լեղամուղ, ջերմիջեցնող, ցավերը հանգստացնող ազդեցությամբ և օգտագործվում են լյարդի ու երիկամների հիվանդությունների, պոդագրայի, հազի, քթի և ըմպանի ախտահարումների ժամանակ:

Վայրի ուտելի բանջարաբույսեր

Աստղաշուշան (լատ.՝ Ornithogalum), խնջլոզ, հակինթազգիների ընտանիքի բազմամյա սոխուկավոր խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 150, ՀՀ-ում՝ 10 տեսակ՝ աստղաշուշան հայկական (O. hajastanum), աստղաշուշան Տեմպսկու (O. tempskyanum), աստղաշուշան լեռնային (O. montanum), աստղաշուշան կարճահասակ (O. brachystachys) և այլն:

Տերևները գծաձև են կամ նշատարաձև, երբեմն՝ վրայից սպիտակավուն ջղերով: Ծաղկաբույլը վահանամման կամ ողկուզանման է, ծաղիկները՝ սպիտակ՝ կանաչ շերտով կամ

կանաչ եզրով: Ծաղկում է մայիս-հուլիսին: Պտուղը ձվաձև կամ հակադիր ձվաձև բազմասերմ տուփիկ է, սերմերը՝ մանր: Ժողովրդական բժշկության մեջ սոխուկներն օգտագործում են թարախապալարների բուժման նպատակով: Տոմպսկու աստղաշուշանը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

Տարածված է գրեթե բոլոր մարզերում: Աճում է չոր լանջերին, քարերի մեջ, գիհու նոսրանտառներում, բոխու և կաղնու անտառներում, լեռնատափաստաններում, ստորին լեռնայինից մինչև ենթալպյան գոտիներում (850-2600 մ բարձրություններում):

Զատկի տոնական սեղանի ուտեստների ցանկում խնջլոզն իր ուրույն տեղն ունի: Նրանից նաև թթու են պատրաստում: Հայկական ընտանիքներում ընդունված էր խնջլոզը պատրաստել Ավագ հինգշաբթի, որպեսզի մինչև Զատիկ արդեն լավ թթված լիներ:

Ավելուկ (լատ.՝ Rumex), թրթնջուկ, թթվաշ, մատիտեղազգիների (հնդկացորենազգիներ) ընտանիքի միամյա, երկամյա և բազմամյա խոտաբույսերի և թփերի ցեղ: Հայտնի է մոտ 150, Հայաստանում՝ 12 տեսակ՝ ավելուկ սովորական (R. acetosa) կամ թթվաշ, ավելուկ գանգուր (R. crispus), ավելուկ ալպիական (R. alpinus), ավելուկ ավելուկանման (R. acetoselloides), թրթնջուկ փոքր (R. acetosella) և այլն:

Ցողունն ուղիղ է, ճյուղավորվող, մերկ, ակոսավոր, կոպիտ, բարձրությունը՝ մինչև 120 սմ: Ցողունները հասունանալուց հետո հաճախ ձողանման են դառնում, տերևներն ամբողջական են: Ծաղիկները երկսեռ են, ավելի

սակավ՝ միասեռ: Պտուղը պատված է ծաղկապատի ներքին 3 մեծացած թերթերով: Տերևները խոշոր են, հերթադիր կոթունավոր, գծաձև կամ նշտարաձև: Ծաղկաբույլը հուրանանման է, ծաղիկները՝ մանր, երկսեռ, հազվադեպ՝ միասեռ: Ծաղկում է մայիս-հուլիսին: Պտուղը եռակող սերմիկ է:

Տարածված է Հայաստանի գրեթե բոլոր մարզերում: Աճում է մարգագետիններում, նոսրանտառներում, թփուտներում, անտառեզրերին, լեռնալանջերին, գետափերին, խոնավ վայրերում և այլն: Աղբոտում է աշնանացան և գարնանացան մշակաբույսերի դաշտերը, խոտհարքները, արոտավայրերը:

Պարունակում է աղաղանյութեր, վիտամիններ, թթուներ, սապոնիններ, ներկանյութ և այլն: Ավելուկն օգտագործում են ժողովրդական բժշկության մեջ դիզենտերիայի, լյարդի հիվանդությունների, մարսողության խանգարման ժամանակ և սննդի մեջ (թարմ, չորացրած):

Ըստ համի՝ ավելուկը լինում է դառը եւ քաղցր:

Ավելուկը բարբառներում կոչվում է վիլուկ (Տավուշ), ավլուկ (Լոռի), մզուկ (չոր ավելուկ, Ղարաբաղ): Ալիշանը հիշատակում է նաեւ սիլխ, ածվոց, Ամիրդովլաթը՝ արաբերեն հումազ բառով, կոչվում է նաեւ դափաթին, լապատան, որ հունարեն lapathum բառն է: Ավելուկի երկար ցողունները կոչվում են աժախ կամ խոլո (Թիֆլիս) եւ գործածվել են իբրեւ փայտանյութ տանիքները ծածկելու համար: Ավելուկի մի տեսակը, որն ունի թթու համ, կոչվում է թրթնջուկ, բարբառներում անվանում են նաեւ թթոտիչ (Ասլանբեկ), թթոնիճ, թթոկիչ, գառան ականջ (Սեբաստիա): Խաշած թրթնջուկի տերեւները դնում են լնդերին, արմատից կարմրավուն ներկ են ստանում, տերեւներով մաքրում են պղնձե ամանները, հյութով՝ թանաքի բծերը:

Ավելուկը ժողովրդական բժշկության մեջ ամենից շատ տարածված դեղաբույսերից է,

բուժական նպատակներով գործածում են ավելուկի արմատը, տերեւներն ու սերմերը։ Փորացավի ու միզակապության ժամանակ փորին խաշած ավելուկ են դնում, կամ էլ ձեթով տապակում են եւ ուտում։ Լուծի դեպքում խաշած ավելուկ են ուտում, իսկ ցրտից ուռած վերքին դնում են կաթով խաշած ավելուկ։ Ավելուկի ջուրը խմում են՝ թոքախտի, փորացավի, միզակապության, սերմի թուրմը՝ թոքաբորբի ու հազի, սերմի ու գոմեշի կաթի խառնուրդը՝ ամլության ժամանակ։ Քոսի դեպքում շապը եւ ավելուկի արմատը ծեծում ու քսում են մարմնին։ Արմատը գործածում են նաեւ ստամոքսի, մաշկի ու թոքերի հիվանդությունների ժամանակ։ Ալիշանը նշում է, որ ջրային ավելուկը մասնավորապես օգնում է փորկապությանը, իսկ ծեծած հունդը գինու հետ ազդում է հոգեվիճակի վրա՝ «զսիրտն ուրախ առնէ»։ Ծեծած հում սերմը խառնում են գինու հետ ու խմում ստամոքսի ու որովայնի ցավերի դեպքում, իսկ ջրախառնուրդը ժահարի դեղ է, որը չեզոքացնում է թույնը։

Սննդի մեջ գործածում են ավելուկի թարմ եւ չոր տերեւները։ Մասնավորապես Խարբերդում կերել են միայն թարմ տերեւները։ Պասի շրջանում ավելուկից պատրաստված կերակուրները հայերի մեջ պարտադիր են եղել։

Դանդուռ (Portuláca), միամյա խոտաբույս, պատկանում է դանդուռազգիների ընտանիքին։

Բույսն ունի առանցքային արմատ՝ մազարմատների խիտ ցանցով պատված։ Արմատը կարմրավուն է։ Սերմերըսև են, մանր և փայլուն։

Դանդուռի ցողունները մերկ են, մսալի, գետնատարած, հիմքից ճյուղավոր։ Տերևները հերթադիր են,

երկարավուն, բութ, հիմքում նեղացած, մսալի: Ծաղիկները տերևանոթներում աճում

են փնջերով: Բաժակի մասերը մսալի են, բութ ողնուցով: Պսակաթերթերը վառ դեղին են, կլորավուն, մոտավորապես 10 մմ

Պարունակում է նորադրենալին: Տերևները պարունակում են վիտամիններ: Ամբողջ բույսը պարունակում է E վիտամին: Արմատը պարունակում է գլյուկոզիդներ, միկրոտարրեր:

Բժշկության մեջ օգտագործվել են դանդուռի վերգետնյա մասը և սերմերը:

Հայկական ավանդական բժշկության մեջ դանդուռն օգտագործել են սեռական թուլության (իմպոտետություն), արևահարության, մարսողական ուղիների ուռուցքների, միզուղիների բորբոքումների, լյարդի, սրտի և ստամոքսբորբոքային հիվանդությունների, թոքաբորբերի, հազի, լուծի, ականջի բորբոքային ուռուցքների, գլխի թեփոտության և միզապարկի խոցերի բուժման համար:

Եղինջ (լատ.՝ Urtica), կծան խոտ, կճան մրմռուկ, աղինջ, դաղդան, դարդահան, եղինջազգիների (Urticaceae) ընտանիքի միամյա և բազմամյա, եղինջ երկտուն (Urtica dioica L.), հազվադեպ՝ եղինջ այրող (Urtica urens L.) միատուն բույսերի ցեղ:

Տարածված է Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում: Աճում է լեռնային, տափաստանային, անտառային գոտիներում, գետահովիտներում, խոնավ վայրերում, աղբոտում խոտհարքները և այլն:

Տերևներում հայտնաբերված են վիտամիններ՝ K, C (մինչև 269 մգ %), B խումբ, կարոտին, կարոտինոիդներ, պան տոտենաթթու, ինչպես նաև մրջնաթթու, քլորոֆիլ (մինչև 5%), դաբաղանյութեր (2 %-ից ավելի), խեժ, պրոտոպորֆիրին, կոպրոպորֆիրին, սիտոստերին, գլիկոզիդ, ուրտիցին, ֆիտոնցիդներ, կվերցետին, կոֆեինաթթու, ֆերուլաթթու, սիլիցիումաթթու, ացետիլխոլին, հիստամին, քիմիական տարրերից՝ կալիում, կալցիում, երկաթ, սիլիցիում, քրոմ, պղինձ, մանգան, ալյումին, վանադիում և այլն: Պտուղները պարունակում են մինչև 32,5% ճարպայուղ: Բույսի մատղաշ տերևները 2 անգամ ավելի շատ վիտամին են պարունակում, քան հաղարջի պտուղները, իսկ կարոտինի պարունակությամբ եղինջը գերազանցում է գազարին, թրթնջուկին և չիչխանի պտուղներին:

Դեղաբույս է: Պատրաստուկներն օգտագործում են որպես միզամուղ, խորխաբեր, հակաբորբոքային, արյունահոսությունը դադարեցնող, վերքերն ապաքինող միջոց: Երիտասարդ ընձյուղներն օգտագործում են սննդի մեջ: Տերևներից ստանում են կանաչ ներկ, ցողուններից՝ թել, որից պատրաստում են կոպիտ գործվածք, պարան և այլն: Բուժման նպատակով օգտագործում են բույսի տերևները, ծաղիկներն ու արմատը: Տերևները մթերում են բույսի ծաղկման ժամանակ, հնձում գերանդիով, թողնում, որ թառամի, որից խայթը հիմնականում կորչում է, այնուհետև չորացնում բացօթյա, լավ քամահարվող տեղում: Չոր հումքը մուգ կանաչ գույնի է, ունի թույլ հոտ, դառը համ: Այն պահում են տուփերի մեջ, 2 տարի տևողությամբ: Արմատը հանում են աշնանը, չորացնում արևի տակ և պահում պարկի մեջ: 10 կգ թարմ տերևներից ստացվում է 2-3 կգ չոր հումք:

Եղինջը որպես դեղաբույս հնուց ի վեր հայտնի է մարդկությանը: Դեռևս Դիոսկորիդը և Պլինիոսը նշել են նրա արյունահոսությունը դադարեցնող հատկության մասին: Ավիցեննան բույսի տերևներն ու սերմերը օգտագործել է գլխուղեղի ախտահարումների, քթային արյունահոսության, ատամներիհիվանդության, բրոնխիալ ասթմայի, պլևրիտների և շնչուղիների բորբոքումների ժամանակ, հաճախ եղինջը զուգակցելով մեղրի և որոշ դեղաբույսերի հետ: Հունդը անճիրա անվան տակ օգտագործել է արյունախխման վերացման, խուխը ջրիկացնելու, բարակ աղիները մաքրելու, երիկամային քարային հիվանդության և միզապարկի ցավերի բուժման նպատակով: Նշել է նաև եղինջի օգտակարությունը ջրգողության և մաշկային խոցերի դեպքում: Առնոլդ Վիլլանովցու տվյալներով, մեղրի հետ խառնած եղինջի սերմերը քնաբեր են, դադարեցնում են փսխումը, վերացնում աղեխիթը, հազը, բուժում խոցերը, հոդաբորբը և շնչական օրգանների ցրտառական հիվանդությունները: Բժիշկ Ռեստին Պետրոսյանի տվյալներով եղինջի տերևը դեղ է համարվում կարկամյալ անդամի, հոդացավության, կաթվածի ժամանակ, զարթնեցնում է ջղերն ու թմրած երակը և միանգամայն հեղաշրջում է արյունը, տրվում է նաև փսխման և շնչարգելության ժամանակ: Բույսից ստացվող քլորոֆիլն օգտագործվում է դեղագործության մեջ, սննդի և պարֆյումերիայի բնագավառում: Ցողուններից պատրաստում են բարձրորակ թել, թուղթ և պարան, տերևներից՝ կանաչ, իսկ կոճղարմատից՝ դեղին ներկ:

Շուշանբանջար (ղմի, քեղակարոս) (լատ.՝ Chaerophýllum), նեխուրազգիների (հովանոցավորներ) ընտանիքի բազմամյա կամ երկամյա, հազվադեպ՝ միամյա խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 40 տեսակ:

Ցողունն ուղղաձիգ է (բարձրությունը՝ 20-160 սմ), ճյուղավորվող, ստորին մասում՝ փշանման մազմզուկներով պատված։ Տերևները փետրաձև կտրտված են։ Ծաղկաբույլը բարդ հովանոց է, ծաղիկները մանր, սպիտակ (հազվադեպ՝ վառ կարմիր), վարդագույն կամ այլ երանգի են։ Ծաղկում է հունիս-հուլիսին։ Պտուղը երկբաժան հատիկ է, որի մասերը կախված են պտղակրից։

ՀՀ-ում հանդիպում է շուշանբանջարի 5 տեսակ՝ ոսկեզօծ, վարդագույն, խոշորապտուղ, երկարամազ, սոխուկավոր (պալարակիր) կամ մանդակ՝ տարածված Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Տավուշի և այլ մարզերի անտառներում, բացատներում, անտառեզրերին, լեռների խոտածածկ լանջերին, թփուտներում։

Դեղաբույս է. պարունակում է եթերայուղեր, ալկալոիդներ։ Արմատների թուրմն օգտագործում են ստամոքսի հիվանդությունների ժամանակ։ Որոշ տեսակների մատղաշ ցողուններից ու արմատներից պատրաստում են աղցան և այլ կերակուրներ, թթու դնում։ Մի քանիսը մոլախոտեր են. աղբոտում են հացահատիկի ցանքերը։ Որոշ տեսակների արմատներն ու մատղաշ ցողուններն ուտելի են։

Սիբեխ (լատ.՝ Falcaria), **սվեղ**, **սազի տոտիկ**, նեխուրազգիների (հովանոցավորներ) ընտանիքի միամյա, երկամյա և բազմամյա խոտաբույսերի ցեղ։ Հայտնի է 4 (այլ տվյալներով՝ 5-6) տեսակ։

Հայաստանիկիսաանապատային, անապատային և տափաստանային գոտիների քարքարոտ և չոր լեռնալանջերում աճում է սովորական սիբեխ (F. vulgaris)։ Վերջին տարիներին օշինդրային

կիսաանապատների յուրացման հետևանքով Սիբեխի բնական պաշարները Հայաստանում զգալիորեն նվազել են: Արարատի շրջանի աղի ճահճուտներում հանդիպում է Սիբեխի ևս մեկ տեսակ՝ F. falcarioides-ը, որը բացառիկ արժեքավոր բույս է և գրանցված է ԽՍՀՄ Կարմիր գրքում:

ՀՀ-ում՝ 2 տեսակ՝

- Սիբեխ սովորական (F. vulgaris)
- Ս. սիբեխանման (F. falcarioides):

Առաջինը տարածված է գրեթե բոլոր մարզերում: Աճում է բաց, չոր լանջերին, անտառեզրերին, թփուտներում, դաշտերում, աղբոտում ցանքերը:

Երկրորդը հանդիպում է միայն Արարատ քաղաքի (Արարատի մարզ) շրջակայքում և Մեծամոր գետի ափերին (Արմավիրի մարզ): Աճում է խոնավ մարգագետիններում, աղի ճահճուտներում, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

Մատղաշ տերևները և ընձյուղները օգտագործվում են սննդի մեջ (թարմ և թթու դրած վիճակում):

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):